

Թիւ 1906  
Փետրուար 16, 1961

Արժանաշնորհ  
Տ. Միքայէլ ԶԿՆՅ. Գրութեո  
Հոգեւոր Հովիւ եւ Նախագահ Միական Խորհուրդի  
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ  
Նիւ Պրորիթըն.

Սիրովի Տէր Հայր.

Ստացած ենք 1961, Յունուար 31 թուակիր Ձեր տեղեկագիրը,  
որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Յունուար 29ին գումար-  
ուած Միական ժողովին կատարած է Միական Խորհուրդի մասնակի ընտրու-  
թիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ըն-  
տրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Միական ժողովը տեղի ունեցած է  
թեմական կանոնադրութեանց քրմադրութեանց համաձայն, եւ ընտրուած  
անձերը, իբրեւ Եկեղեցւոյ նախանձախնդիր ու նուիրեալ անդամներ,  
կը վայելեն ձեր համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը վաւերաց-  
նենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին. -

- Տիարք՝ Հէրրի Ղուկաս
- Հէրրի Գատրիկեան
- Հայկ Սոսան
- Ճիւան Յուսիկեան
- Կրէկորի Արքահամեան
- Հէրրի Գէրպէրեան

Օրհնելով նորընտիր անդամները՝ կը մաղթենք Ձեզի եւ պատուար-  
ժան Միական Խորհուրդիդ յաջող եւ արդիւնաւոր գործունէութիւն, ի փառս  
Աստուծոյ եւ ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ ու ի շինութիւն համայնքիդ  
մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մեամբ Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Ազօթարար

ՍԻՈՆ ԱՐԵՍՊՈՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի